ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆԴԸ ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ЦИВИЛИЗАЦИОННЫЙ ВКЛАД АРМЕНИИ В ИСТОРИЮ ШЕЛКОВОГО ПУТИ

CIVILIZATIONAL CONTRIBUTION OF ARMENIA IN THE HISTORY OF THE SILK ROAD



ՀՏԴ 93/99:06
ԳՄԴ 63.3
Հ 247

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտաժողովի կազմակերպումը և հետազոտություններն իրականացվել են ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 11-6a634 «Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրումը թուրք-ադրբեջանական պատմագրության մեջ» գիտական թեմայի շրջանակներում:

Խմբագրական խորհուրդ՝

Ա.Ա. Մելքոնյան, պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Ա.Ա. Խառատյան, պ.գ.դ. ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Է.Լ. Դանիելյան, պ.գ.դ., Հայոց փիլիսոփայական ակադեմիայի իսկական անդամ
Գ.Ս. Ստեփանյան, պ.գ.դ.
Կ.Հ. Խաչատրյան, պ.գ.թ., դոցենտ

Редакционная коллегия

А.А. Мелконян, д.и.н., член-корреспондент НАН РА
А.А. Харатян, д.и.н., член-корреспондент НАН РА
Э.Л. Даниелян, д.и.н., действительный член Армянской философской академии
Г.С. Степанян, д.и.н.
К.Г. Хачатрян, к.и.н., доцент

Editorial Board

A.A. Melkonyan, Doctor of History, Corresponding Member of NAS RA
A.A. Kharatyan, Doctor of History, Corresponding Member of NAS RA
E.L. Danielyan, Doctor of History, Member of the Armenian Philosophical Academy
G.S. Stepanyan, Doctor of History
K.H. Khachatryan, PhD in History, Associate Professor

Հ247 Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ. Միջազգային գիտաժողովի նյութեր, 2011 թ. նոյեմբերի 21–23 / խմբ. խորհուրդ. – Եր.: Պատմության ինստիտուտ, 2012. – 423 էջ:

ISBN 978-99941-73-71-6

ՀՏԴ 93/99:06
ԳՄԴ 63.3

©Պատմության ինստիտուտ, 2012

ՀՈԴՎԱԾՆԵՐ

СТАТЬИ

ARTICLES

Թ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՏԵՔՍՈՒՄ

(Հայ ժողովրդական հեքիաթների հիման վրա)

Հայ ժողովրդական բանահյուսության և միջնադարյան մատենագրության մեջ առկա են Արևելյան երկրների հետ փոխառնչությունների բազում դրվագներ, որոնց մասին հիշողությունները կենցաղավարում են մասնավորապես հեքիաթներում: Հայկական հեքիաթները պահպանել են այդ միջավայրին վերաբերող մանրամասներ՝ ծովային և քարավանային առևտուր, ապրանքափոխանակություն, կնիք, դրամական շրջանառություն և այլն: Գտնվելով Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքով պայմանավորված միջազգային տարանցիկ առևտրի կենտրոնում՝ Հայաստանը «Մետաքսի ճանապարհով» կապվում էր Սև և Միջերկրական ծովերի ավազանների նավահանգիստների հետ, դրանց վրայով առևտրական գործարքներ էր կատարում Իրանում, Միջագետքում, Եգիպտոսում, Հնդկաստանում և Չինաստանում:

Հազարան բլբուլ, Սինամահավք (չինական թռչուն), անմահական ջուր ու խնձոր և չնաշխարհիկ (Չինաց աշխարհից) գեղեցկուհիներ որոնող մեր հեքիաթների հերոսները հաճախ հայտնվում են օտար, այնկողմնային համարվող աշխարհներում: Հայկական «Քյոսի, Թոփալի ու Քոռի նաղլը»[1], «Մեռլի հրեշտակը»[2], «Ավճի Շաբուի տղեն»[3], «Սիմոն կուպեցին հեքիաթը»[4], «Մաջրում խոջի հեքիաթը»[5], «Իմաստուն քուռագի հեքիաթը»[6], «Երեք դարդատեր»[7], «Առջի տղա»[8] և այլ հեքիաթներում հերոսներն առևտուր են անում, բախտ կամ ճշմարտություն որոնում Սպահանում, Հալեպում, Թեհրանում, Հնդու երկրում, Չինմաչինում, Արաբստանում, Բաղդատում և անգամ խորհրդանշական Պղնձե քաղաքում ու Քաջանց երկրում:

Արևելյան պատկերացումների հիմքով ստեղծված հայկական հեքիաթներում առանցքային դեր է կատարում Հայաստանից արտահանվող և դրսից ներմուծվող ապրանքների տեսականին: Գործնական շփումներին, առևտրական և մշակութային կապերի հաստատմանը մասնակցում էին տարբեր երկրներով անցնող «Մետաքսի ճանապարհի»[9] մերձավորությամբ ապրող ժողովուրդները: Այդ ճանապարհը անցնում էր հայկական հինավուրց մայրաքաղաքներով և խոշոր քաղաքային կենտրոններով՝ Արտաշատ[10], Տիգրանակերտ, Դվին, Անի, Կարս, Կարին, Արծն, Ջուղա, Նախիջևան և այլն: Առևտրական քարավանները Հայաստան էին բերում չինական ու միջինասիական մետաքսե գործվածքներ, հնդկական անուշահոտ յուղեր, համեմունքներ, թանկագին քարեր, ռուսական մորթիներ ու մուշտակներ: Հռոմա-պարթևական առևտրական կապերն ըստ Ստրաբոնի՝ վերելք են ապրում Հայաստանի շնորհիվ, ինչպես նաև Պոնտական Կոմանա քաղաքի բարգավաճումը կապված էր Հայաստանից արտահանվող ապրանքների առևտրի հետ[11]:

[1] ՀԺՀ, հ. I, Երևան, 1959, էջ 507–511:
[2] ՀԺՀ, հ. II, Երևան, 1959, 243–253:
[3] ՀԺՀ, հ. IV, Երևան, 1963, էջ 27–45:
[4] Նույն տեղում, էջ 319–329:
[5] Նույն տեղում, էջ 105–117:
[6] Նույն տեղում, էջ 139–148:
[7] ՀԺՀ, հ. VIII, Երևան, 1977, էջ 532–547:
[8] Նույն տեղում, էջ 790–794:
[9] «Մետաքսի ճանապարհը» սկսել է գործել մ.թ.ա. 2-րդ դարի կեսերին, երբ սկսվեցին առևտրատնտեսական և մշակութային հարաբերություններ հաստատվել Հռոմեական և Հանի (Չինական) կայսրությունների միջև: Հենց այս ժամանակաշրջանում սկսեցին կապեր հաստատվել նաև Առաջավոր Ասիայի երկրների և Կենտրոնական Ասիայի ու Չինաստանի միջև (А. Мартиросян, На Великом шелковом пути, Ереван, 1998, с. 3):
[10] Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատը, Պլուտարքոսի վկայությամբ, մ.թ.ա. I դարում ունեցել է առևտրատնտեսական լայն շառավիղ և կարևոր նշանակություն (Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, с. 53–54):
[11] Страбон, География, Москва, 1964, XI, 5,8, XII, 3,36.

Հայտնի է, որ մոնղոլական հրոսակների կողմից Չինաստանի հյուսիսային շրջաններ քշված հազարավոր տարագիրները նույնպես զբաղվում էին առևտրով[12]:

«Մեռլի հրեշտակը»[13] (Այրարատ) հեքիաթում թագավորն իր որդիներից յուրաքանչյուրին «իրեք հարիր մանեթ» է տալիս ու պատվիրում, որ առևտուր անեն, մարդ դառնան: Մեծ ու միջնեկ տղաները փողերը «բազարում», քամուն են տալիս, իսկ թագավորի պուճուր տղան «իրեք հարիր մանեթով» փակում է ծեծվող մեռելի պարտքերը, տերտեր է կանչում և իր ծախսով թաղում նրան: Երեկոյան նա դատարկ վերադառնում է տուն ու հորը պատմում իր արարքի մասին: Թագավորն ուրախանում է, հրամայում, որ իր գանձարանից մի գոգ ոսկի բերեն տղայի համար. «Որդի,– ասումա,– գնա՛ ուրիշ երկիր ապրանք ա՛ռ բե՛ր ըստե ծախա, աղպորտանցդ միջին բալի էլի դու իմ էրեսը պարզ անես»[14]: Եվ այսպես հայկական հեքիաթների հերոսները օրերով, շաբաթներով, ամսով ճանապարհ են գնում, օտար քաղաքների «քարվանսարում վե գալի, օթախ քրեհում, կենում, իրանց առուտուրի հեննա ըլնում»[15]:

«Հարամբաշու հեքիաթում»[16] (Այրարատ), «Սիմոն կուպեցին հեքիաթում»[17] (Բասեն) վաճառականները, հասնելով օտար երկիր, գնում են թագավորին տեսության և թույլտվություն են խնդրում՝ նրա երկրում առևտուր անելու համար. «Թագավորն ապրած կենա, մենք այսինչ բազրկյաններն (վաճառականներ) ենք, բերել ենք մեր ապրանքը էս քաղաքը սաղացնենք. թե իրավունք կա՝ ծախենք, թե իրավունք չկա՝ էթանք ուրիշ քաղաք:

Ասեց.- Որթի, իրավունք ունեք, բազրկյանների ապրանքը քաղաքներըմը կսաղանա»[18]:

[12] Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 327:
[13] ՀԺՀ, հ. II, 243–253:
[14] Նույն տեղում, էջ 246:
[15] ՀԺՀ, հ. II, էջ 249:
[16] ՀԺՀ, հ. I, էջ 368–376:
[17] ՀԺՀ, հ. IV, էջ 319–329:
[18] ՀԺՀ, հ. I, էջ 372:

«Մեռլի հրեշտակը»[19] հեքիաթում հերոսները վերադառնալիս նույնպես «գալիս են, գալի, շատն ու քիչն Աստծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս...»[20]:

Մետաքսը Չինաստանից Հայաստան և Արևմուտք տեղափոխելն ապահովում էր մեծ կարողություն: «Տակավին մ.թ.ա. 124 թ. փաստեր են արձանագրված Հայաստան ներմուծված չինական մետաքսի վերաբերյալ»[21]: Այս կապերը շարունակվեցին նաև միջնադարում, ընդհուպ մինչև XVII–XVIII դարերը[22]: Քարավանները ճանապարհվում և մետաքսի բեռով վերադառնում էին երկու տարվա ընթացքում. «Քարավանապետերը միշտ հայեր էին լինում: Արևելքն ու Արևմուտքը հեղեղող բեռնափոխադրումը կենտրոնացված էր Ջուղայի վաճառականների ձեռքում»[23]: Օտար երկրներ առևտրի գնալիս հեքիաթի հերոսները «ասսու անումը տալիս են, ընկնում ճամփա»[24]: Երկարատև այդ ճամփորդությունը թեև ապահովագրված չէր կյանքի համար վտանգավոր փորձություններից, սակայն գայթակղիչ էր եկամտաբերության առումով: «Սխալ կլիներ կարծել, որ Հայաստանը միայն միջազգային տարանցիկ առևտրի կամրջի դեր էր կատարում»[25]: Նա արտաքին այդ առևտրին մասնակցում էր նաև սեփական արտադրանքով: Հայաստանում դեռ հնագույն ժամանակներից արհեստները լայն տարածում էին գտել: Երկրի ներքին առևտրին համընթաց աշխուժանում էր հատկապես արտաքին առևտուրը: Ընդարձակ առևտրի պահանջ-

[19] ՀԺՀ, հ. II, 243–253:
[20] Նույն տեղում, էջ 251:
[21] Ա. Ժամկոչյան, Միջնադարյան Հայաստանի հախճապակին 9–14-րդ դարերում.- Հայաստանի հնագիտական հուշարձանները, թիվ 10, Երևան, 1981, էջ 97: Մետաքս (հուն. metaksa, ասոր. mitaksa)-շերամի որդի արտադրած նրբաթելը, ազնիվ կերպասեղեն (Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. Գ, Երևան, 1944, էջ 308:
[22] М. Кречетова, Несколько китайских фарфоровых предметов с армянскими монограммами.- Труды Отдела Востока Эрмитажа, т. 3, М-Л., 1940, с. 346–350.
[23] Фернан Бродель, Игры обмена, Материальная цивилизация, экономика и капитализм, XV–XIII вв., (перевод с французского Л. Е. Куббеля), т. 2, Москва, 1988, с. 146.
[24] ՀԺՀ, հ. I, էջ 507, հ. II, էջ 247:
[25] Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 811:

ներից ելնելով՝ Տիգրան Մեծի և Արտավազդ 2-րդի օրոք դրամ է կտրվում: Հայաստանից արտահանվում էին հացահատիկ, ձիեր, ջորիներ, աղ, գինի, երկաթ, կապար, պղինձ, անագ, ներկեր (որդան կարմիր), կաշի, բուրդ, Վանա լճի աղ դրած տառեխ ձուկը, գորգեր, անտառանյութ (փայտ), կաշվեղեն[26]: Հիշատակվում է նաև Հայաստանի գինին, որը արտահանվում էր գլխավորապես Միջագետքի քաղաքները: Ըստ Հերոդոտոսի՝ հայկական գինին եփրատի հոսանքով հասցնում էին մինչև Բաբելոն[27]:

«Ավճի Շաբուրի տղեն»[28] (Շիրակ) հեքիաթում որսորդի որդին Հայաստանից բերված քառասուն տիկ գինով հարբեցնում է «Հնդու երկրի» քառասուն փղերին, քերթում է նրանց ոսկորները և ուղտերի քարավանին բարձած՝ բերում-հասցնում է իր երկիրը[29]:

«Սումբաթի հեքիաթում»[30] (Այրարատ) հարուստ վաճառական Սումբաթի հոր քառասուն չրաղները (ապրանքն անվտանգ երկրե-երկիր տեղափոխող ծառայողները) Սումբաթից պահանջում են, որ իր հանգուցյալ հոր պես իրենց աշխատանքով ապահովի: Սումբաթը չի ուզում «դուքանի» դուռը փակել, գեղեցկուհի կնոջը տանը թողնել և «չրաղների» հետ աշխարհեաշխարհ ման գալով՝ առևտուր անել: Նա աշխատանքի դիմաց «չրաղներին» ապրուստի փող է առաջարկում՝ յուրաքանչյուրին հինգ հարյուր, իսկ հետո՝ հազար մանեթ: «Չրաղները» չեն համաձայնվում՝ պատճառաբանելով. «-Ախար չէ՞ նաղդ փող ա, կտանենք, կփչացնենք, կմնանք քո մոտին ամոթով»[31]:

Հեքիաթի շարունակության մեջ տեսնում ենք, որ առևտրական հարաբերությունների ծավալման շնորհիվ պարզ ապրանքափոխանակությանը զուգահեռ նկատելի է դառնում նաև դրամական շրջանառությունը: Առևտրատնտեսական կյանքում մեծանում է

[26] Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 810–811, Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IX–XIII դդ., Երևան, 1946, էջ 75:
[27] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 80–81:
[28] ՀԺՀ, հ. IV, էջ 27–45:
[29] Նույն տեղում, էջ 32:
[30] ՀԺՀ, հ. II, էջ 525–533:
[31] Նույն տեղում, էջ 526:

փողի դերը: Վերոհիշյալ հեքիաթում վաճառականի կինը հավատացած է, որ «Փողը փող կաշխատի»[32] և ամուսնուն խորհուրդ է տալիս փողի փոխարեն «չրաղներին» գործ տալ, որպեսզի փողը գործի մեջ դրվի և եկամուտ բերի. «Կնիկն ասում ա.- Դուստ են ասում, նաղդ փողը կտանեն, կփչացնեն, գործ տու՛, գործ»[33]: Կնոջ խորհրդով՝ Սումբաթը «չրաղներին» պատվիրում է քառասուն եզ առնեն, ապրանք առնեն, «էթան խրիդ անելու»[34] (առևտուր անելու): Սակայն հեքիաթները ուշագրավ տեղեկություններ են պարունակում նաև «խրիդ անելու» բարդ օրենքների, հարստություն կուտակելու մոլուցքով իրար դավելու, չարաճճիգործեն ուրիշի ունեցվածքին տիրելու «բազրգյանների» խարդախությունների մասին: Նման պարագայում հեքիաթներում, տվյալ դեպքում՝ վերոհիշյալ «Սումբաթի հեքիաթում» կամ «Սիմոն կուպեցին հեքիաթում» սովորաբար թիրախ է դառնում փորձի պակաս ունեցող վաճառականի միայնակ մնացած կինը, ով հանիրավի զրպարտվում է նենգ վաճառականի կողմից: Եվ քանի որ «Առուտուր ընելիս ըպրանքին նետ հոգի էլ ա ծախվում»[35], վաճառականը զրպարտում է Սումբաթի կնոջը: Սումբաթը համոզված լինելով կնոջ հավատարմության մեջ գրազ (մարջ) է գալիս՝ պահանջելով ապացույցներ: Վաճառականը Սումբաթին առաջարկում է նարդի խաղալ. «Քառասուն բեռն իմն ա, քառասուն բեռը քունն ա, քառասուն չրաղ իմն ա, քառասուն՝ քունն ա. թե ես գնացի քու կնկա պատկերը բերեցի, քու քառասուն բեռը, քառասուն չրաղը ինձ, դու էլ ինձ նոքար, թե չբերի, իմ ունեցածը քեզ, ես քեզ նոքար»[36]: Ինչպես կյանքում, հեքիաթում նույնպես զառ գցելը, խաբելն ու խորամանկելը իրենց հերթին դառնում են մրցության թեմա և խաղային ձև. «Խարդախը ձևացնում է, թե հետևում է խաղի կանոններին և մասնակցում է

[32] Ա.Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960, էջ 248: Տե՛ս նաև Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, Արցախ, տետր № 1, 2006 թ., «Փողը փող կը պիրի, թե վեր ղադրը գիդես» (նույն տեղում, թերթ 42):
[33] ՀԺՀ, հ. II, էջ 526:
[34] ՀԺՀ, հ. II, էջ 526:
[35] Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, Արցախ, տետր № 1, 2006 թ., թերթ 43:
[36] ՀԺՀ, հ. II, էջ 527:

խաղին միևչև բռնվելը»[37]: Հետաքրքիր է նկատել, որ «դեռևս XVII դարում ժամկետային առևտրային գործարքները հայտնի էին «գրազներ» անունով»[38]: Վաճառականը կեղծ փաստերով Սումբաթին թյուրիմացության մեջ է գցում, գրազը շահում և ունեզրկում: Սումբաթի կինը հարցուփորձ անելով հասնում է Թեհրան, իր խելքով ու հնարամտությամբ պատժում խարդախ վաճառականին, բացահայտում ճշմարտությունը, փրկում ամուսնուն և վերջինիս ունեցվածքը. «Մի երկու օրից եղը Սումբաթը թազա ապրանքը առած էկավ իրա դուքանի առաջին վեր ածեց»[39]:

Քարավանները Հնդկաստանից Հայաստան էին բերում բրինձ, բամբակ, բամբակի գործվածքներ, հնդկական համեմունքներ, թանկագին քարեր և գոհարեղեն, խնկեղեն, փղոսկր, սև փայտ, ներկանյութեր[40]: Դրսում մեծ պահանջարկ էր վայելում ընկուզենու փայտը: «Քյոսի, Թոփալի և Քոռի նաղլը»[41] (Այրարատ) հեքիաթը ցուցանշական է հեքիաթի հերոսի ու նրա առևտրական գործերի հետ կապված մանրամասներով: Հեքիաթի հերոսը, ինչպես ինքն է ներկայանում, «բազրկյանի տղա» է, անունը՝ Մարտիրոս, «Փարպի գեղից»[42]: Հոր մահից հետո նա հարցուփորձ է անում պարզելու, թե Հալեպում որ ապրանքը բարձր պահանջարկ ունի, իմանում է, որ «շիմշատ փետը շատ թանգ ա ծախվըմ Հալեպումը»[43]: Եվ թեև հայրը պատվիրել էր Հալեպ չգնալ, «տղեն առավ քառասուն - ղաթրի բեռ շիմշատի փետ, բարցեց, ասսու անըմը տվեց, ընկավ ճամփա»[44]: Աստծո անունով ճամփա ելած մարդը Հալեպ հասնելուն պես հայտնվում է փորձանքի մեջ: Առաջին իսկ իջևանատիրոջ «նոքարները» բեռնաթափում են բազրկյանի որդու քառասուն ջորիներին՝ պատճառաբանելով, թե առավոտյան ճանապարհ ընկնելն ավելի ապահով կլինի: Բեռնաթափման ժամանակ Թոփալը մի բեռ շիմշատ փայտ է գողանում, «կեսը լցնում է օջաղը, կեսն էլ դնում թախտի տակը»[45]: Քյոսեն, Թոփալն ու Քոռը բազրկյանի տղային խաբում են, թե. «Մեր քաղաքըմը էտ փետը մուֆթա ա, վառըմ են, ու տարավ շանց տվեց, որ օջաղը լիքն էր, թախտի տակը լիքն էր»[46]: Իսկ հետո իբր ափսոսում են, որ էդ խեղճ մարթը անտեղի «ահագին ծախս ա քաշել, ահագին քրեհ ա տվել», ոնց որ «աղը բարցել ա՝ տանըմ ա Կողբըմն ա ծախըմ: Դե՛, ասըմ ա, - հոքս մի՛ հանի, էս բադիռվը (պղնձե խոր աման) օխտը ոսկի կտամ քեզ, քու ծախսդ էլ ա դուս կգա»[47]: Բազրկյանի որդին Հալեպի խանութներից մեկում ծանոթանում է մի «դուքանչի հալիվորի» հետ և իմանում, որ Հալեպում Հայաստանից բերված շիմշատ փայտը շատ թանկ արժե, «մսխալը կաժենա հինգ մանեթ», իսկ ինքը Քյոսայի, Թոփալի և Քոռի՝ երեք թալանչի ընկերների հերթական զոհն է: Պարտված Քոռ թալանչին որոշում է զրպարտել Մարտիրոսին: Նա տանուտերին բողոքում է, իր մի աչքն է ուզում, որը իբր ժամանակին տվել է բազրկյանի տղային: Բազրկյանի տղան էլ ասում է. «-Շատ լավ. իմ մի ի՛աշկն էլ հանեք, Քոռի էն մի ի՛աշկն էլ հանեք, դրեք կշեռքը կըշռեք, թե որ բարեբար ըլի, տվեք նրան»[48]: Կոնֆլիկտը հանգուցալուծվում է արդարությունն ու առևտուրը մատնանշող կշեռքի՝ թե՛ իրական-նյութական, թե՛ խորհրդանշական գործառույթով: Հեքիաթն ավարտվում է երախտապարտ հայ առևտրականի նվիրատվությամբ. «Նոր ըտե էտ տղեն իրա բեռները ծախեց, մի բեռը տվեց աշչուն փեշքաշ, էտ քյարվանսարեն էլ թողաց դրան, իրա բեռները ոսկի շինած, ետ դառավ իրանց վաթանը»[49]:

«Սուրայի սովդաքյարի որթու հեքիաթում»[50] (Այրարատ) հերոսները ոչ միայն իրենց երկրի ապրանքները ջորիներին բարձած

[37] Յո. Հայզինգա. Homo Ludens, Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, Երևան, 2007, էջ 79:
[38] Նույն տեղում, էջ 78–81:
[39] ՀԺՀ, հ. II, էջ 532:
[40] Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 810:
[41] ՀԺՀ, հ. I, էջ 507–511:
[42] Նույն տեղում, էջ 508:
[43] Նույն տեղում, էջ 507:
[44] Նույն տեղում:

[45] Նույն տեղում:
[46] Նույն տեղում, էջ 508:
[47] Նույն տեղում:
[48] Նույն տեղում, էջ 511:
[49] Նույն տեղում:
[50] ՀԺՀ, հ. I, էջ 196–208:

(ղաթըր) տանում են հեռու երկրներ վաճառելու, այլև օտար երկրներից նավով ապրանք են բերում (մի գյամչի ապրանքը թափել էր, պըտի ետ դառնար)[51], երբ թագավորի աղջիկը նավավարին խնդրում է, որ իրեն էլ այդ նավով տանի հեռու երկիր. «Ախչիկը ձի էլավ գյամին, գնացին: Համա ի՞նչ թավուր ա քշըմ գյամին, դու պրծա՞ր»[52]: Նույն «Որսորդ Հայրապետ» հեքիաթում «տղան փրցոց կեմին. տվեց անկինը. տասվերկու ամիս թարմ ծովի վրա մնըց. նե՛ սև, նե՛ քար, նե՛ լեառ կէրևա. էրկինք ու ծով կար»[53]:

Չինաստանից բերվող հում մետաքսի փոխարեն Հայաստանից արտահանվում էր արհեստագործական արտադրանք՝ մետաղե գործիքներ, ոսկյա և արծաթյա իրեր, պերճանքի առարկաներ, պղնձյա ամաններեն, ռազմական գործի հետ առնչվող զենքեր ու զրահներ, բրդե և մետաքսե գործվածքեղեն, որոնք արտադրվում էին Հայաստանի քաղաքների «գործոց տներում»[54] և որոնց մասին բավականաչափ տեղեկություններ կան հայ մատենագրության մեջ[55] և հեքիաթներում:

«Ավճի Շաբուրի տղեն»[56] (Շիրակ) հեքիաթում որդին զարմանում է, թե իր հայրն ինչ մասնագիտություն ուներ, որ այդքան զենք ու զրահ կա տան մի անկյունում. «Էս իմ հերս ի՞նչ զանիաթի էր, որ - ըսավ մորը,- էսքան սիլլահ կը պահեր:

-Ավճություն կէներ,- ըսավ մերը:

[51] Նույն տեղում, էջ 201:
[52] Նույն տեղում:
[53] ՀԺՀ, հ. XVI, Երևան, 2009, էջ 402: Հնուց անտի հայ ծովայինները մեծ համբավ ունեին Հնդկաստանի նավահանգիստներում: Ինճիճյանը գրում է, որ «հայերը երևելի նավապետներ եղած են», որոնք «մեծ նավեր բանեցնելով վարպետ եղան Պենկալային առջևին ծոցին մեջ ու Գանկես կամ Կընկա գետին մեջ նավարկելու...» (Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 261):
[54] Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա 1861, էջ 180, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 810–813:
[55] Ղազար Փարպեցին իբրև հայոց աշխարհի «երկրի տակ ծածկված գանձեր», մատնացույց է անում «ոսկին ու պղինձը, երկաթն ու պատվական քարերը, որոնք ընկնելով արհեստավորի ձեռքը, թագավորներին զուգում են գեցեցկատեսիլ զարդերով ու բանվածքներով, ինչպիսին են խույրերի, թագերի ու հանդերձների վրա ընդելուզված ոսկեհուռ պաճուճանքները» (Ղազար Փարպեցի, Հայոց Պատմություն, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, էջ 23):
[56] ՀԺՀ, հ. IV, էջ 27–45:

-ես էլ, - ըսավ,- ավճություն կէնեմ հորս պես»[57]:

Հայաստանի հնագույն զենքերից են եղել նետն ու աղեղը (հեքիաթներում՝ նետ ու աներ, նետվաներ), ինչպես նաև պեղածո հարվածող մարտական զենքերը՝ քար նետող պարսատիկները (փիլիկան)[58], գուրզը (մական), նիզակը (մզրախ), որի փոխարեն հայ պատմիչները հաճախ գործածել են աշտեն կամ գեղարդ բառերը, իսկ Չարսանճագի բարբառով գրառված հեքիաթներում նետի փոխարեն գործածվում է խըշտ բառը: «Գորտ»[59] հեքիաթում «մենծ տղան նետեց. խըշտը գնըց ընկավ լալային դուռը»[60]: «Անմահական խնձոր» (Այրարատ) հեքիաթում թագավորի փոքր տղան «նետուաներեը վե կունի, կէթա խնձորի ծառի տակին ղարավուլ կքաշի»[61]: Հայ մատենագրության մեջ[62] հիշատակություններ են պահպանվել արհեստի տարբեր ճյուղերով (մանածագործություն, ներկարարություն, ոսկերչություն, բրուտագործություն, գինագործություն, դարբնություն) զբաղվող մարդկանց մասին, իսկ ժողովրդական հեքիաթներում տեղեկություններ կան նրանց արտադրանքի վերաբերյալ, որոնց մի մասը առևտրի և փոխանակության միջոցով արտահանվում էր հարևան և հեռավոր երկրներ: Բնորոշ է, որ մ.թ. I-II դարերում հայոց լեզուն հարստանում է «շուկա», «խանութ» և առևտուր բնորոշող այլ ասորական բառերով[63], ինչպես նաև հեքիաթներում հանդիպող «պազար» (բազար), «դուքան» (կուղպակ-կրպակ-կուրբա) բառերով[64], որոնք վկայում են, որ ինչպես Արևելքում, մեզանում նույնպես քաղաքի հիմնական հատկանիշը շուկան է՝ իր խանութներով:

[57] Նույն տեղում, էջ 28:
[58] Արիստակես. Լաստիվերցի, Պատմություն: Թարգմանությունը Վ. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 61–62:
[59] ՀԺՀ, հ. XVI, էջ 334–352:
[60] Նույն տեղում, էջ 334:
[61] ՀԺՀ, հ. II, էջ 24:
[62] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց: Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1981, էջ 194, Կ. Գանձակեցի, Հայոց Պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, 1982, էջ 260, Ա. Լաստիվերցի, նշվ. աշխ., էջ 61–62:
[63] Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 813:
[64] ՀԺՀ, հ. I, էջ 508, հ. II, էջ 525:

Արաբ հեղինակների վկայությունները հայերի բարեկեցիկ կյանքի մասին համախոս են հայկական աղբյուրների հետ: «Հայաստանում պատրաստվող բրդե, բամբակե ու մետաքսե զանազան գործվածքների ու կտորների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում արաբական մատենագիրները՝ Իստախրին, Իբն Հաուքալը, Յակուբին, Մասուդին և ուրիշները»[65]: Իբն-ի Բատուտան Երզնկայի մասին հայտնում է, որ «այնտեղ կան լավ կարգավորված շուկաներ, այստեղ շինում են գեղեցիկ կերպասներ, որ իր անունով են կոչվում: Նրա մեջ կան պղնձի հանքեր, որով շինում են ամաններ և «բայսուսներե (աշտանակներ)»[66]:

Խոսելով Սմբատ Ա-ի և նրա հոր՝ Աշոտի թագավորության առաջին շրջանի մասին՝ Ստեփանոս Տարոնեցին հայտնում է, որ մինչև իսկ հովիվներն ու նախրապանները հագնում էին մետաքսե պատմուճաններ[67]: «Արտուճ և խաղաղ թագավոր»[68] հեքիաթում թագուհին հանդիմանում է անտառում ծիսական փորձությունների հաղթահարման փուլում գտնվող, «քարը բարձ դարձրած» իր որդուն և վերջինիս հիշեցնում է իր «ղումաշե ընկողինը»[69]:

Գործվածքեղենի և մասնավորապես մետաքսի արտադրության զարգացածությունը միջնադարյան Հայաստանի քաղաքներում հաստատվում է ինչպես ձեռագիր աղբյուրներով[70] ու մատենագրական վկայություններով[71], այնպես էլ գործվածքների պեղածո նմուշներով[72] և բանահյուսական միջավայրում կենցաղավարող հեքիաթներով: Կիրակոս Գանձակեցին գրում է, որ հայ կանայք նուրբ ձեռագործերով զարդարել են իշխանական հագուստները, սուրբ խորանի ծածկոցները, եկեղեցական վարագույրները, որ «ներկված էր պես-պես ու գույնզգույն, գործված էր քանդակածև ու նկարված էր պատկերներով»[73]:

«Հելուզակ թագուհին»[74] հեքիաթում աղջիկն իր գլխաշորը տալիս է աղքատ հալիվորին, պատվիրում այն «պազարում» վաճառել՝ ապրանքի գինը սահմանելով «չորս հարիր մանեթ»: Այդ գումարով գնում են տեղաշոր, ուտելիք, հագուստ, մետաքս ու մետաքսե կտոր. «-Էս հարիր մանեթը կտաս յորղան դոշկի. հարիր մանեթն էլ կտաս ապրըշմի (մետաքս), ղնայուգի (մետաքսե կտոր)»[75]: Մետաքսե կտորից աղջիկը գլխաշորներ է պատրաստում, իսկ հալիվորը դրանք վաճառում է շուկայում. «Աղջիկը օրական շիքեց լայլուխ, հալիվորը ծախեց. հա՛ ծախեցին, հարստացան: Քաղաքին մեջ էլ մե մեծ վաճառական էդ խալիվոր դարձավ»[76]:

Հայկական հեքիաթներում թագավորին դիմավորում են ոսկյա սպասքով[77], հերոսները «խաս շորեր» են հագնում, «օսկի մատնիկ», «գինդ», «ապըրջան» կրում կամ «քյամար» կապում[78]: Վերոհիշյալ հեքիաթներում ամենաթանկարժեք զարդերն ու ակնեղենը

[65] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10–11-րդ դարերում, Երևան, 1940, էջ 29:
[66] Իբն-ի Բատուտա, Օտար աղբյուրներ հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 31:
[67] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 161: Մ. Խորենացին Արտաշես արքայի հուղարկավորության մասին հայտնում է. «...Նրա դագաղը, ասում է, ոսկեղեն էր, գահը և անկողինը բեհեզից և մարմինը պատող պատմուճանը ոսկեթել, գլուխը թագ դրած, ոսկյա զենքը առջևը» (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 229):
[68] ՀԺՀ, հ. XVI, էջ 372–379:
[69] Նույն տեղում, էջ 374:
[70] Մանածագործության մասին խոսուն փաստեր են պահպանվել ձեռագրերի կազմերի ներսի կողմից ծածկված մետաքսյա և կտավե աստառներում (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռագիր № 5554, 5555, 5559, 5563, 5591, 5569, 6263 և այլն, որոնք պատկանում են 12–13-րդ դարերին): Անիի երազահանում կողք կողքի հիշատակված են բամբակը, իլիկը, «Ջահրան» (ճախարակը), «ապրեշումը» (մետաքս), բուրդը, մազը և կաճը (ՄՄ, ձեռ. № 695, թ. 205բ):

[71] Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., էջ 23, Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 135, Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 61–62: Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 228:
[72] 1908 թ. Տիգրան Հոնենցի տոհմային դամբարանից հանվել է վերջինիս ազգականներից մեկի՝ փոքրիկ իշխանադստեր հագուստը՝ «մետաքսեայ ամբողջ հագուստ ոսկէ բանուածքներով ու մետաքսով, և ոսկով նուրբ հիւսած քող, մետաքսեայ ժապաւէնից գօտի» (Յ. Օրբելի, Անոյ աւերակները, Վաղարշապատ, 1911, էջ 46):
[73] Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 157:
[74] ՀԺՀ, հ. III, Երևան, 1962, էջ 262–273:
[75] ՀԺՀ, հ. III, էջ 270:
[76] Նույն տեղում:
[77] ՀԺՀ, հ. VIII, էջ 66:
[78] ՀԺՀ, հ. IX, Երևան, 1968, էջ 261–262:

հաճախ գնահատում են հրեա (ջհուդ) ոսկերիչները, որոնք շատ խորամանկ են և հմուտ առևտրի մեջ[79]: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեքիաթներում առկա հիշողությունները համախոս են պատմական տվյալների հետ[80]:

«Հարամբաշու հեքիաթում»[81] թագավորի որդին սիրահարվում է վաճառականի քրոջը: Թագավորը պահանջում է, որ աղջկա պատկերը քաշեն ու ուղարկեն իրեն. «Ես թաքավոր եմ, հո չեմ էրթա էն ախչկանը տենալու. ես պըտի էն ախչկա պատկերը տենամ՝ իմ տղի լայաղին ա, թե չէ»[82]: Վաճառականն անհանգստանում է, թե ինչպես պիտի մի գիշերվա մեջ աղջկա պատկերը հանեն: «Քիրն ասեց.- Ախպեր ջան, դու արխեին կաց, իմ ձեռին դժար չի: Դու գնա դուքանը հինգ ռանգ աբռշումի թել բեր, կես գազ ել ղնավուզ (մետաքսե կտոր), բեր, որ վրին գործեմ»[83]: Քույրը մետաքսե կտորի վրա ոսկե թելերով այնպիսի վարպետությամբ էր ինքն իրեն պատկերել, որ «ինքն էլ մայիլ մնաց իրա ձեռի գործի վրա: Բացի դրանից քիրը շինել ա մի ոսկե խոնչա, մի ոսկե կաքավ, ոսկե ճուտերը հետը ֆռռում են»[84]:

«Հելուզակ թագուհին»[85] (Այրարատ) հեքիաթում Արևելյան կողմի թագավորի որդին իր մի տոպրակ ոսկին կարող էր ստանալ միայն իր կնիքը ուղարկելուց հետո. «Երբ օր ես իմ փեչադը օղորկի՝ ես ոսկին ըղրկի՛ր, գա»[86]: Տուրուբերան-Մուշից գրառված «Հեքիաթ Տովլաթ - տուշկունի, մարդու մը ու փաշայի մը»[87] բնագրում ոսկերիչը կնիք (մոր, մոհր) է պատրաստում մեծահարուստի կնիքի նմանողությամբ, որով հեքիաթի հնարամիտ հերոսը գանձարանից հանում է «էրկու հարիր օսկի»[88]:

[79] ՀԺՀ, հ. II, էջ 163:
[80] Фернан Бродель, նշվ. աշխ., էջ 146.
[81] ՀԺՀ, հ. I, էջ 368–376:
[82] Նույն տեղում, էջ 374:
[83] Նույն տեղում:
[84] Նույն տեղում, էջ 375:
[85] ՀԺՀ, հ. III, էջ 262–273:
[86] Նույն տեղում, էջ 267:
[87] ՀԺՀ, հ. XIII, Երևան, 1985, էջ 379:
[88] Նույն տեղում, էջ 387: Հնդկահայ արհեստավորության մեջ, մասնավորապես

XVII դարում հայ վաճառականները «Մետաքսի ճանապարհի» արևմտյան հատվածի վրայով շարունակում էին իրենց առևտուրը: 1643 թ. գրված մի հիշատակարում վաճառական Հակոբը հայտնում է. «...մինչև Լ.(30) ամ ի վերայ աշխարհիս շրջէի բազում ընչիւք, ծախիւք, վաճառէի զինչս իմ, եթէ ծովով կամ ցամաքով: Զամենայն երկիրս տեսանէի՝ ի յերկիրն Ֆռանկաց տեսայ, բազում անգամ ի Կաստանդնուպօլիս վաճառեցի զինչս իմ, ի յերկիրն Յունաց բովանդակ տեսի մինչ ի Հալապ, Բաղդատ, Շամ, Երուսաղէմ, տեսայ: Այլ և Պարսից երկիրն զամէն՝ մինչ ի Խորասան տեսայ: Բ(2) անգամ յերկիրն Օզբէգստան մտայ: Այլ և գ (3) անգամ ի յերկիրն Հնդստան գնացի»[89]:

Հատկանշական է, որ հայ առևտրականներին հաճախ ուղեկցում էին հայ հոգևորականները, որոնք Չինաստան էին գնում քարոզչության նպատակով[90]:

Այցելելով հեռավոր երկրներ և լավ ծանոթ չլինելով տեղացիների բարքերին՝ երբեմն վաճառականների հաղորդած տեղեկությունները տարածվում էին իրարամերժ ու սարսափազդու այլակերպումներով, որոնք վեր էին ածվում հրաշապատում սյուժեների: Հայոց հնագույն պատկերացումներով՝ դրախտը գտնվում է Արևելքում և հենց Չինաստանից են բացվում «դրախտի դռները»: Այս ամենի արձագանքները տեսանելի են նաև հայ բանահյուսության («Մեր տերն Արևելից գա ի դատաստան»)[91] և դասական գրականության մեջ[92]:

Կալկաթայի հայ համայնքում մեծ թիվ էին կազմում ոսկերիչները, որոնք «այնպիսի համարում ունեին, որ նրանց շատ հաճախ պատվերներ էին տալիս ո՛չ միայն Հնդկաստանից, այլ նաև Եվրոպայի և Ասիայի զանազան երկրներից» (Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 260):
[89] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641–1660), հ. Գ, Երևան, 1984, էջ 436:
[90] Ուշագրավ է, Նիկոլայ Միլեսկու Սպաֆարիի (1675–1678 թթ. գլխավորում էր ռուսական դեսպանությունը դեպի Չինաստան) վկայությունը Չինաստանում իտալացի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոյի և հայ անվանի հոգևորական, միսիոներ Անտոն Սուլթանիեցու հետ հանդիպման մասին (Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 326, Հ. Մարտիրոսյան, Հայաստանը Մետաքսի ճանապարհի խաչուղիներում.– «Պատմա-բանասիրական հանդես», 1989, №, 4, էջ 92):
[91] Աղոթք, «Փորձ», № 2, Թիֆլիս, 1877–78, էջ 273–274 (Զավախք):
[92] Թողի երկիրն իմ հայրենի,/ Անահ անցա Արաբ ու Հինդ,/ Տեսա մարդիկ չորս

Հեթում պատմիչը հայտնում է, որ «այնքան այլազան և հրաշագեղ բաներ կան այս երկրի մեջ (այսինքն՝ Չինաստանում – Թ. Հ.) և այնքան նրբարվեստ, որ հազիվ թե որևէ մեկը համեմատվի նրանց հետ»[93]: Հայաստանում հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են չինական խեցեղեն և հախճապակի (սելադոն), որի արտադրության մշակույթը առաջացել է Չինաստանում, իսկ արդեն 9–10-րդ դարերում, մասնագետների կարծիքով, Դվինի խեցեգործական արհեստանոցներում վարպետները, վերամշակելով հախճապակե խեցանոթների որոշ զարդեր, ստեղծում են տեղական նմուշներ՝ հախճապակյա թասեր, ափսեներ, խոշոր պնակներ, կճուճներ՝ գծադիր և դրոշմված, խորաքանդակ և այլ զարդերով, որոնք ինքնատիպ են և ունեն ժամանակի հայկական արվեստին հատուկ ոճ[94]: Արդեն 18-րդ դարի վերջին քառորդին և 19-րդ դարի սկզբին հայ-չինական առևտրական կապերն այնքան էին զարգացել, որ հայ վաճառականների պատվերով չինացի արհեստավորները պատրաստում էին հայատառ մակագրություններով ճենապակե առարկաներ[95]: Ի դեպ «Սասնա ծռեր» էպոսի որոշ պատումներում Խանդութի աչքերը համեմատվում են չինական բաժակի հետ[96], իսկ չար աչքի դեմ հմայական աղոթքներում օձի կաթը լցնում են չինական բաժակի մեջ («Կթեցի զկաթ՝ քասա չինին»)[97], ինչը վկայում է Հայաստանում չինական ապրանքների առկայության մասին:

XVI–XVIII դարերում հայերն այնպիսի դիրք և հեղինակություն ունեին Չինաստանում, որ իրենց ապրանքները տեղափոխում էին հայկական տարբերանշան ունեցող սեփական շոգենավերով, իսկ եվրոպացիները Չինաստան մուտք գործելիս, Ղ. Ալիշանի վկայությամբ, ապահովության համար հագնում էին հայկական տարազ՝ ներկայանալով իբրև հայ[98]: Ճիշտ է, XVIII դարի վերջերին Չինաստանում հաստատված անգլիական առևտրական ընկերությունները և մյուս եվրոպացի գաղութարարները հայերի ազդեցությունը համաշխարհային առևտրի մեջ նվազեցնելու նպատակով սկսեցին հալածել չինահայ վաճառականներին, բռնագրավել վերջիններիս նավերը: Վերոհիշյալ հիշողություններն արտահայտվել են նաև հայկական հեքիաթներում (քարավանների վրա հարձակում, ապրանքների բռնագրավում և այլն): Հայկական հեքիաթների հերոսները հաճախ քարավանատերերին ու ջահելներին խրատում են գիշերը ճանապարհ չգնալ: Հեքիաթների շարունակության մեջ մենք տեսնում ենք, որ խրատին չհետևողները պատուհասվում են կա՛մ հեղեղից, կա՛մ ավազակների հարձակումներից[99]:

Արաբ աշխարհագրագետ Ալ-Իստահրին վկայում է Հայաստանի մայրաքաղաք Դվինում արտադրվող բրդե հագուստների, գորգերի, բարձերի, բազմոցների, ղայթանների և հայկական արտադրության այլ իրերի, ինչպես նաև Դվինում արտադրվող մետաքսյա կտորների և տեղում «քիրմիզ» (որդան կարմիր) կոչված ներկով մահուդի ներկման մասին[100]: «Խոջա Մահմուդ, խոջա Ալի»[101] (կարճկան-Գոմս) հեքիաթում ջհուդները խոջա Մահմուդի ապրանքի մեջ «յափմա կըրմըզ» են որոնում, այսինքն՝ կեղծ որդան կարմիր ներկ, որը գտնելու պարագայում, վաճառականին պիտի տուգանեն: Ճիշտ է, հեքիաթում ջհուդները զրպարտում են վաճառականին, սակայն հեքիաթը փաստում է յուր ժամանակին որդան կարմիրի բարձր պահանջարկի և շուկայում տվյալ ներկի կեղծ ապ-

գլխանի,/ Տեսա հազար աղետ ու խինդ Հասա մինչև Չինումաչին,/ Հասա մինչև ծովը ծերմակ,/ Տեսա երկրի ծայրը վերջին/ Եվ դրախտի դուռը կրակ (Վ. Տերյան, Երկեր, Երևան, 1989, էջ 158):

93 Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ, Ի Վենետիկ 1842, էջ 6–7:

94 Ա. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 97–98:

95 М. Кречетова, նշվ. աշխ., էջ 346–350:

96 Սասնա ծռեր, ժողովրդական վեպ, հ. Ա, Երևան, 1936, էջ 32, 284:

97 Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Աշխատասիրությամբ՝ Ս. Հարությունյանի, Երևան, 2006, էջ 84, N 19:

98 Ղ. Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ ի Մխիթարայ վանս, 1893, էջ 467:

99 ՀԺՀ, հ. VII, Երևան, 1979, էջ 136–139, 458–463, հ. IX, էջ 119–123, հ. XV, Երևան, 1998, էջ 160-168, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Ռ. Գրիգորյան հ. 14, (Գեղարքունիք), Երևան, 1983, էջ 127-128, Հ. Գուրունյան, Համշենահայ բանահյուսություն, Երևան, 1991, էջ 45–47:

100 Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск двадцать девятый, Тифлис, 1901, с. 19.

101 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, FA IV, 2325–2392:

րանքանմուշների մասին: «Բայց Հայաստանում ամենից ավելի շատ տարածված էր գորգագործությունը, որը պետք է բավարարեր թե՛ տեղական պահանջները և թե՛ արտահանվեր արտաքին շուկաներ իբրև վաճառքի առարկաներ: Արաբ պատմիչների տեղեկությամբ հայերը հարկի դիմաց խալիֆայությանը տալիս էին նաև գորգեր»[102]: «Սիմոն կուպեցին հեքիաթում»[103] Կոստանդնուպոլսի թագավորի որդին իր հոր պալատում մի ամիս շարունակ հյուրընկալում է Սիմոն կուպեցի տղային և պատասխան հրավերն ընդունում է՝ քայլելով Կոստանդնուպոլսի պալատից մինչև հարուստ հայ վաճառականի դուռը փռած խալիչայի վրայով: Հայկական գորգերի և դրանց վաճառքի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում Ադամ Մեցը: Հայտնի է, որ հայկական արտադրության գորգերն արտահանվում էին ոչ միայն Արևելք, այլև Արևմուտք: Օմայանների խալիֆ ալ-Վալիդ 2-րդի տանը պատերը և հատակը ծածկված էր հայկական գորգերով: Ար- Ռաշիդի կինը նստում էր հայկական գորգի վրա, իսկ նրան շրջապատող կանայք հայկական բարձերի վրա[104]:

Հայաստանում արտադրվող բազմատեսակ նուրբ կտորեղենները վկայում են հում նյութի և ներկի[105] տեղական մեծ պաշարների մասին: Հյուսվածքագործությունը ծաղկում էր ոչ միայն Դվինում և Անիում, այլև՝ Երզնկայում: Հայաստանի և Երզնկայի մասին Մարկո Պոլոն հայտնում է. «Այս մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որ կոչվում է Արզինգա (Երզնկա), ուր հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները (buckram): Երկրի ժողովուրդը հայեր են»[106]: Հյուսվածքեղենի համար օգտագործում էին բուրդը, բուսական թելերը և շերամի որդի արտադրած մանրաթելը, որով հպարտանում է միջնադարյան առակի թթենին, «զի սաղարթ իւր նիւթ է մետաքսեայ»[107]:

Կիրակոս Գանձակեցին նշում է, որ մոնղոլների վարած դաժան հարկային քաղաքականության պահանջով՝ արհեստավորները նույնպես հարկատու էին պետությանը[108]: Խոսքը դարբինների, շապարարների (ծեփարարներ) մասին է, որոնք կերպասներ և բրդե կտորեղեններ ներկող արհեստավորներ էին[109]: Իսկ Արաբական տիրապետության տարիներին, հատկապես VII–VIII դարերում Օմայանների օրոք մտցված հարկահանության նոր՝ բնամթերքի միջոցով կատարվող կարգը, Հայաստանում ստեղծում է տնտեսական ծանր վիճակ: Շիրակից գրառված «Ծանր հարկեր»[110] հեքիաթում դերվիշի շոր մտած թագավորի և վեզիրի ծարավը այգեպանը հագեցնում է իր այգում աճող նռան հյութով: Միայն մեկ նռան հյութը բավարարում է երկուսին:

«Բը էդ բաղեն ինչքա՞ն օքուտ կը քաղե բաղպանճին,– մտածում է թագավորը,– ես մինչի հիմի հարկեր չեմ դրե ըդունց վրեն»[111]:

Պալատ վերադառնալով՝ թագավորը հարկման է ենթարկում նաև այգեպաններին: Երկիրը հայտնվում է ծանր դրության մեջ: Երկու-երեք տարի հետո ծպտված թագավորն ու վեզիրը դարձյալ այցելում են այգեպանին և ջուր են խնդրում: Այս անգամ այգեպանը մի չորացած նուռ է բերում, քամում է, քամում, բան դուրս չի գալիս: Թագավորը հարցնում է, թե ինչպես եղավ, որ «էրկու-իրեք տարի առաջ էկա էս բաղը, ջուր ուզեցի. դու բերեցիր մի նռով էրկու հոգի կշտացուցիր: Հիմի սաղ բաղեն մեզի ընչի՞ չը կրցար ջուր խմցներ»[112]:

Այգեպանը պատասխանում է, որ իր այգին թագավորի դրած հարկերից չորացավ:

[102] Վ. Աբրահամյան, նշվ. աշխ.,էջ 82:
[103] ՀԺՀ, հ. IV, էջ 319–329:
[104] Адам Мец, Мусульманский Ренесанс, Москва, 1973, с. 369.
[105] Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 23:
[106] Հ. Հակոբյան, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ. Ա, (ԺԹ–ԺՋ դար), Երևան, 1932, էջ 48:

[107] Գրական հուշարձաններ, Ա, Մ. Գոշ, Առակներ, Երևան, 1951, էջ 50–51:
[108] Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 260:
[109] Վ. Աբրահամյան նշվ. աշխ., էջ 75:
[110] ՀԺՀ, հ. IV, էջ 441–442:
[111] Նույն տեղում, էջ 441:
[112] Նույն տեղում:

Թագավորը վերադառնում է իր «թախտը», վերանայում իր հարկային քաղաքականությունը և երկիրը հարստացնում:

«Աշկը ծակ դաղմաչին»[113] (Արցախ) հեքիաթում ընչաքաղց հարկահավաքի պատճառով գյուղացու այգին չորանում է, դառնում «չոր խուշուշ»[114]:

Դաղմաչի (մուխքսիբ, մութսիբ) բառը հարկահավաքի, առևտրական մաքսը հավաքողի, շուկայի չափ ու կշռի հսկիչի պաշտոն է նշանակում, ինչի մասին հիշատակվում է Ս. Գունդստաբլի Դատաստանագրքում[115] և վիմագիր արձանագրություններում[116]: Իսկ ժողովրդի վերաբերմունքը անխնա հարկահանության, մաքսային տուրքերի վերաբերյալ, ցավոք, այսօր նույնպես խիստ արդիական է:

Ամփոփելով բանահյուսական, մատենագրական և հնագիտական տվյալները քննվող թեմայի վերաբերյալ և մասնավորապես հայ ժողովրդական հեքիաթներում առկա դրսից ներմուծվող և Հայաստանի քաղաքների «գործոց տներում» արտադրվող ու արտահանվող ապրանքատեսականու մասին, կարող ենք ասել, որ այսօր, երբ կրկին մեծացել է Արևելքի երկրների դերը համաշխարհային սոցիալ-քաղաքական ու մշակութային ասպարեզում, մենք հայերս հնուց անտի դրացիական կապեր ենք ունեցել հարևան ու հեռավոր ազգերի հետ ու ներգրավված ենք եղել արևելքի ու արևմուտքի, հյուսիսի և հարավի պատմամշակութային և առևտրատնտեսական միջազգային կարևոր գործընթացներում:

[113] Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, Արցախ, 2004 թ., տետր № 2, էջ 62–68:
[114] Նույն տեղում:
[115] Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի), Կիլիկեան դատաստանագիրք XIII դարի, Ձեռագրերի համեմատութեամբ լոյս ընծայեց Արսէն Վարդապետ Ղլտճեան, Ս. էջմիածին, 1918, էջ 63:
[116] Летопись на камнях, собрание-указатель армянских надписей, составил К. Костанянц, С.- Петербург, 1913, с. 27.

Т. АЙРАПЕТЯН

ШЕЛКОВЫЙ ПУТЬ В КОНТЕКСТЕ ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИХ И ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ СВЯЗЕЙ

(На основе армянских народных сказок)

T. HAYRAPETYAN

THE SILK ROAD IN THE CONTEXT OF COMMERCIAL-ECONOMIC AND HISTORICAL-CULTURAL RELATIONS

(On the basis of Armenian folktales)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ա.

Արևմտյան Հայաստանը Արևելք-Արևմուտք առևտրական հարաբերությունների ոլորտում 4

ՍԻՄՈՆՅԱՆ Հ.

Հայաստանը և միջազգային առևտուրը վաղ բրոնզի դարում 18

ՂԱՋԱՐՅԱՆ Ռ.

Հայաստանը միջազգային առևտրի ոլորտում Ք.ա. II հազարամյակի առաջին կեսին 38

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ս., ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ.

Անին և Երվանդունիները 46

ՎԱՐԴՈՒՄՅԱՆ Գ.

Կրոնները մետաքսի ճանապարհին հին և վաղ միջնադարյան ժամանակներում 59

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ե.

Միջազգային առևտրական ուղիների համակարգը Մերձեփրատյան սահմանային գոտում 79

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա.

Մետաքսի ճանապարհը և հայոց թագավորությունը IX դարի վերջին և X դարի սկզբին 93

ԳԵՎՈՐԳՅԱՆ Ջ.

Մետաքսի ճանապարհի Այաս-Թավրիզ առևտրական մայրուղին (XIII դ. երկրորդ կես – XIV դ. առաջին կես) 109

ԲԵՍՈԼՈՎ Վ.

Մետաքսի Մեծ ճանապարհը որպես հասարակական շինությունների և ինժեներային կառուցվածքների ճարտարապետական նախկին մորֆոտիպերի զարգացման և նորերի ձևավորման գործոն 121

ԲԱԼԱՅԱՆ Կ.

Մետաքսի ճանապարհը և հայկական նավագնացությունը 152

ԴՈՒՄԻԿՅԱՆ Ա.

Մետաքսի ճանապարհի առևտրում հայերի գործունեության արժևորումը XIII–XIX դդ. ֆրանսիացի ճանապարհորդների հուշագրություններում 167

ԽԱՌԱՏՅԱՆ Ա.

Ջմյուռնահայ առևտուրը Լեվանտում և Եվրոպայում 175

ՄՈՒՇԵՂՅԱՆ Ա.

Ջուղահայերի հուշամեդալների պատմությունից 191

ՍՏԵՓԱՆՅԱՆ Գ.

Շամախահայերի դերը արևելյան Այսրկովկասի առևտրատնտեսական հարաբերություններում 198

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԱԼԲԵՐՏ

Հայերը Մետաքսի ճանապարհին 219

ԿՈՒՅՄՈՒՋՅԱՆ Տ.

Չինական վիշապները և փյունիկները հայերի մոտ (XIII–XIV դդ.) 227

ԿՈՐՆԻԼՈՎ Ա.

Ժամանակակից ռուս-հայկական հարաբերությունների աշխարհաքաղաքականությունը և նրա ազդեցությունը «Նոր Մեծ Մետաքսի ճանապարհ» նախագծի վրա 254

ՄՈՒՐԱԴՅԱՆ Ի.

Մետաքսի ճանապարհը արդի փոփոխվող աշխարհաքաղաքական տիրույթում 270

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է.

Հայաստանի քաղաքակրթական ներդրումը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ և ժամանակակից մարտահրավերները 292

ՀԱՎՈՐԴՈՒՄՆԵՐ

ՕՆԻԲԵՆԵ Պ.

Սոգդիական ժառանգությունը և ժամանակակից Տաջիկստանը 313

ՊԼՈՍԿԻԽ Վ.

Միջնադարյան հայկական վանքի որոնումները Իսիկ-Կուլ լճի ափին և ջրի տակ 323

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ.
Չինական խեցեղենը որպես Մետաքսի ճանապարհի ցուցիչ 326
ԱՎԱՆԵՍՈՎ Հ.
Արցախում մետաքսագործության ձևավորման հարցի շուրջ 336
ՆԱՀԱՏԱԿՅԱՆ Ո.
Հայերի քաղաքակրթական դերն ու կշիռը միջազգային հաղորդակցության խաչուղիներում 339
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Թ.
Մետաքսի ճանապարհը առևտրատնտեսական և պատմամշակութային փոխառնչությունների ենթատեքստում (հայ ժողովրդական հեքիաթների հիման վրա) 344
ԹՈՄՅԱՆ Ո.
Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ եւ դրամից բոլոր աշխարհի» ձեռնարկի նշանակությունը հայ վաճառականության նոր սերնդի կրթման գործում 364
ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ Ա.
Հնդկահայ վաճառականությունը համաշխարհային առևտրատնտեսական կապերում (XVI–XVIII դարերում) 376
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.
Սիմուրգի (սիրամարգ) առասպելի դրսևորումները միջնադարյան հայ մշակույթում 398

Հեղինակների մասին 405

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

МЕЛКОНЯН А.
Западная Армения в сфере торговых отношений Восток-Запад..... 4
СИМОНЯН А.
Армения и международная торговля в эпоху ранней бронзы..... 18
КАЗАРЯН Р.
Армения в сфере международной торговли в первой половине II тысячелетия до н. э. 38
ПЕТРОСЯН С., ПЕТРОСЯН Л.
Ани и Ервандиды 46
ВАРДУМЯН Г.
Религии на Шелковом пути в древности и в раннем средневековье 59
МАРГАРЯН Е.
Магистрали международных торговых путей в Приевфратской пограничной зоне 79
ЕГИАЗАРЯН А.
Шелковый путь и Армянское царство в конце IX и в начале X вв. 93
ГЕВОРКЯН З.
Торговая магистраль Айас-Тебриз на Шелковом пути (вторая половина XIII в. – первая половина XIV в.) 109
БЕСОЛОВ В.
Великий шелковый путь как фактор развития прежних и формирования новых архитектурных морфотипов общественных зданий и инженерных сооружений 121